ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար օդորակիչների, տպիչների, համակարգչային և պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հուլիսի 25-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-13» պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 2023 թվականի կարիքների համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցվել են:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 07.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.8 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

25.07.2022թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-13» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 19 » դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԻ ԸՆԴ ՓԻ ԷՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Դալլաքյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 25.07.2022թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-13» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Կատարողի համաձայնությունը՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 2023 թվականի կարիքների համար հատկացված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամից 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական հատկացումների նվազեցման վերաբերյալ.

1.1. Պայմանագրի 07.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 3 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՍԻ ԸՆԴ ՓԻ ԷՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նար-Դոսի 80
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 06927568
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1510035656200100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	**Տնօրեն՝ Լ. Դալլաքյան**
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 19 » « 12 » 2023թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 1
« 07 » « 03 » 2023թ. կնքված N 2 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
13	50311120/7	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ												100000	100000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻ ԸՆԴ ՓԻ ԷՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նար-Դոսի 80
ՀՀՎՀ՝ 06927568
Հ/Հ՝ 1510035656200100
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Լ. Դալլաքյան

(ստորագրություն)
Կ.Տ